«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 26.04.2024 թ. թիվ 355 Ն/Մ հրամանի

ԿԱՐԳ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՄԱՑԱՆՑԱՑԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 11, 25.04.2024թ.

Վանաձոր
2024թ.

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի-ի (այսուհետ՝ Համալսարան) համացանցային պաշտոնական www.vsu.am կայքի (այսուհետ՝ Կայք) և համալսարանի սոցիալական ցանցերի https://www.facebook.com/vanadzor.vph, https://www.instagram.com/vanadzor_state_university) (այսուհետ՝ Ցանցեր), տելեգրամ ալիքի և տելեգրամ բոտի պաշտոնական գործածության նպատակները և Համալսարանի ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունները:

2. Համալսարանը ապահովում է իր կողմից իրականացվող կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը, իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության հրապարակումը և դրան ծանոթանալու մատչելիությունը:

3. Կայքը և Ցանցերը Համալսարանի պաշտոնական էջերն են համացանցային տիրույթում, գործառնվում են Համալսարանի Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից:

II ԿԱՅՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Կայքի գործածության նպատակներն են՝

4.1 հասարակության հետ կապի ապահովում,

4.2 աշխատանքի թափանցիկության ու հրապարակայնության ապահովում,

4.3 Համալսարանի հեղինակության բարձրացման ապահովում,

4.4 Համալսարանի գիտակրթական գործունեության և ներքին կյանքի վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ իրազեկում,

4.5 համացանցային տիրույթում Համալսարանի վարկանիշի ձևավորում,

4.6 համալսարանական կրթության զովազդում:

III. ԿԱՅՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

5. Կայքում տեղադրվող բոլոր նյութերը մշակվում են հասարակայնության հետ կապերի մասնագետի և լրագրողի կողմից՝ Բաժնի ղեկավարի անմիջական վերահսկմամբ:

6. Կայքի տեխնիկական աշխատանքները իրականացնում է web-կայքի ադմինիստրատորը՝ կայքավար, որը Բաժնի միջոցով համագործակցում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ:

7. Կայքում իրականացվում են հետևյալ գործառույթները՝

7.1 նորությունների բաժնի պարբերաբար թարմացում,

7.2 նոր հայտարարությունների տեղադրում, հին կամ ժամկետանց հայտարարությունների արխիվացում,

7.3 Համալսարանի և ստորաբաժանումների վերաբերյալ նյութերի տեղադրում,

7.4 Համալսարանի կառուցվածքի մասին ամբողջական տեղեկատվության հրապարակում,

7.5 Համալսարանում տեղի ունեցող իրադարձությունների, այդ թվում՝ հանրապետական և միջազգային գիտաժողովների պարբերաբար և պատշաճ մակարդակով լուսաբանում,

7.6 Համալսարանի և ստորաբաժանումների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տեղադրում,

7.7 վերը նշված նյութերի և տեղեկատվության տեղադրման ապահովումը եռալեզու տարբերակով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն,

7.8 Կայքի հարց-պատասխան բաժնի վարում,

7.9 Համալասարանի կանոնադրության, ռազմավարության, համալսարանական կրթությանն առնչվող ՀՀ և միջազգային իրավական ակտերի, ներհամալսարանական կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի մասնագիտությունների, դիմորդներին ներկայացվող պահանջների, ՎՊՀ քոլեջի և հենակետային վարժարանի մասին ամբողջական տեղեկատվության, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության վերաբերյալ տեղեկատվության, բակալավրի, մագիստրատուրայի կրթական ծրագրերի, դասընթացների ուսումնամեթոդական փաթեթների, դասացուցակների, ուսումնական ծրագրերի, ուստարվա ժամանակացույցերի տեղադրում՝ դրանք համապատասխան բաժինների կողմից հատկացնելու դեպքում, դրանցից հին կամ ժամկետանց նյութերի արխիվացում կամ հանում.

7.10 Կայքի կառուցվածքային փոփոխությունների կատարում:

IV ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ, ՏԵԼԵԳՐԱՄ ԱԼԻՔԻ, ՏԵԼԵԳՐԱՄ ԲՈՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

8. Ցանցերի, տելեգրամ ալիքի և տելեգրամ բոտի աշխատանքները համակարգում և իրականացնում են հասարակայնության հետ կապերի մասնագետը և լրագրողը՝ Բաժնի ղեկավարի անմիջական վերահսկողությամբ:

9. Համալսարանի մասին տեղեկատվության տարածման արդյունավետ ձևերից են՝ սոցիալական ցանցերը՝ ֆեյսբուք, ինստագրամ, տելեգրամ ալիքը և տելեգրամ բոտը, որոնք գործարկվում են հետևյալ նպատակներով՝

9.1 Համալսարանի կյանքի լուսաբանում,

9.2 միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացում,

9.3 նորությունների լուսաբանում,

9.4 տեսահոլովակների միջոցով համալսարանական կյանքի լուսաբանում,

9.5 ամենամսյա մեդիա ամփոփումներ,

9.6 Համալսարան-հասարակություն կապի սերտացում և ընդլայնում,

9.7 Էլեկտրոնային հարցումների հնարավորություն և պատասխանների օպերատիվություն,

9.8 շահառուների հետ հետադարձ կապերի իրականացում:

V ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

10. Կայքում տեղադրվում են ինչպես Բաժնի կողմից ստեղծված, այնպես էլ Համալսարանի բոլոր ստորաբաժանումների կողմից տրամադրված նյութերը, տեղեկատվությունը կամ տվյալները:

VI ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնակարգը ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել ՎՊՀ գիտական խորհրդի կողմից 24.12.2015թ. ընդունված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի համացանցային պաշտոնական կայքի աշխատանքների կազմակերպման» կարգը: